

ԲՆԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑՄՈՒՆՔՆԵՐ

Սրի յառիտութենէրոսն լրայ :

Ինչո՞ւ համար ջուրը հեղուկ է .

— Եւ ամեն զի ամէն մէկ մանր կաթիլները իրարմէ զատուած են տաքութեան պատճառաւ , և երբոր աս ջուրը սաստիկ պաղեցընելու ըլլաս՝ սառ կը դառնայ :

Ինչո՞ւ համար ջուրը զլաքարն ու աղը պիտի լուծէ .

— Եւ ամեն զի ջրին մասունքները շաքարին կամ աղին ծակտիքներուն մէջ մտնելով , անոնց մասունքը իրարմէ կը քակտէ ու իրեն հետ կը միացընէ :

Ինչո՞ւ տաք ջուրը աւելի դիւրաւ կը թափանցէ մարմնոց մէջ քան թէ պաղը .

— Եւ ամեն զի մէյմը ջերմութիւնը ջրին հետ միացած ըլլալով , երբոր մարմնոց մէջ կը մտնէ՝ տաքութեամբ ճամբայ կը բանայ . ասկէ զատ՝ ջրին մասունքը տաքութեամբ աւելի մանր բաժնուելով՝ դիւրաւ կը մտնեն մարմնոց մէջ :

Ինչո՞ւ ջրով և կամ խոնաւութեամբ երկաթը կը ժանգոտի .

— Եւ ամեն զի ջուրը երկու տեսակ հեղուկէ՝ կամ կաղէ ձևացած է , որոնց բնալոյծները թթուածին ու ջրածին կ'ըսեն . անանկ որ 85 մաս թթուածին կազ երբոր 15 մաս ջրածինով բաղադրուի՝ կ'ըլլայ հարիւր մաս ջուր : Իւստի մետաղները միշտ թթուածինը իրենց կը քաշեն . անոր համար երբոր խոնաւութիւնը երկրթի վրայ կ'իջնայ , անոր մէկ քանի մասունքը ջրին թթուածնին հետ կը միանան , ու անկէ ժանգ կը պատճառի :

Ինչո՞ւ համար երբոր ջրով լեցուն խորունկ տեղ մը կամ ծովու մէջ հանդերձ ծանրութեամբ դատարկ շիշ մը բերանը աղէկ գոցած ընկղմելու ըլլաս , քիչ ատենի մէջ շիշը ջրով կը լեցուի .

— Եւ ամեն զի շիշը վար իջնալու ատեն , քովի ջրերը ան աստիճան վրան կը ծանրանան , որ չարաչար ճնշումն

կրելով՝ աղին բարակ մասունքը շիշին ծակտիքներէն անցնելով՝ ջրին հետ մէկտեղ ներս կը լեցուին : Եւ ամեն զի 750 ոտք խորութեան մէջ սաստիկ բռնութիւն կը կրէ շիշը :

Ինչո՞ւ համար ծովուն ջուրը աղի է .

— Եւ ամեն զի նախ ծովուն մէջ շատ աղի հանքեր կան . երկրորդ՝ մէջը կը պայտին մասունքը ըլլալով՝ սաստիկ կը դառնացընեն ջուրը , երրորդ՝ մէջը գտնուած անհամար կենդանեաց փտութիւնը առախորժ համար կուտայ ջրին :

Ինչո՞ւ համար ծովէն ելած շոգին անձրև պիտի դառնայ ու անուշ ըլլայ .

— Եւ ամեն զի ծովէն ելած շոգին ջրին ամենաբարակ ու թեթեւ մասունքն է . ուստի աղն ու ուրիշ ծանր մարմինները վարը կը մնան ու թեթեւները վեր կ'ելլեն :

Ինչո՞ւ երբոր հեղուկով լեցուն շիշի մը մէջէն հեղուկը պարպելու ըլլաս նէ՛ առջի բերան դժուարութեմբ կը թափի .

— Եւ ամեն զի դրսի օդը ուզելով մէկէն ներս մտնել՝ ջրին դուրս ելլելը կ'արգելէ , ինչուան որ կամաց կամաց ներս մտնէ . ան ատեն իրեն առաձգութեմբ հեղուկին կ'օգնէ որ դիւրաւ դուրս ելլէ :

Ինչո՞ւ այլ և այլ հեղուկներ ինչ կարգով որ ամանի մը մէջ լեցընելու ըլլաս , նոյն կարգով չեն մնար .

— Եւ ամեն զի ան հեղուկն որ աւելի ծանր է՝ հարկաւ տակը կ'իջնայ և թեթեւը վեր կ'ելլէ . զոր օրինակ թէ որ ամանի մը մէջ ջուր , ձէթ ու սնդիկ լեցընես և աղէկ մը խառնելէդ ետեւ թողու ըլլաս , մէկէն կը տեսնես որ սնդիկը տակը կ'իջնայ , ջուրը անոր վրան , ձէթն ալ ամենուն վրայ :

Ինչո՞ւ ջրով լեցուն գաւաթի մը մէջ հացի կեղևի վրայ կամաց կամաց գինի լեցընելու ըլլաս , գինին առանց ջրին հետ խառնուելու ջրին երեսը կը կենայ .

— Եւ ամեն զի գինին ջրէն շատ թեթեւ է : Եւ բանա առանց հացի կեղևին ալ կրնայ ըլլալ , միայն թէ խիստ կամաց պիտոր լեցուի . և ան ատեն կը տեսնես որ գինին ջրին տակը կ'իջնայ ու կամաց կամաց վեր կ'ելլէ :